# 953 Օվսաննա՜ (3) Թագավորին (2),

1. Օվսաննա՜ (3) Թագավորին (2),
Փառաբանի՜ր Արարչին գովքով,
Հարուցյալ Արքային երգի՜ր,
Օ, մեծարի՜ր, փառաբանի՜ր
Տիրոջ անունը հավիտյան,
Դու, մեծարի՜ր, փառաբանի՜ր.
Նա արժանի է գոհության:

2. Օվսաննա՜ (3) Թագավորին (2),
Գոհացե՜ք Տերից, Նա բարի է,
Օրհնեցե՜ք, սաղմոս երգեցե՜ք,
Պատմեցե՜ք Իր սերը ժողովրդին,
Բարձրացրե՜ք Իր Սուրբ անունը:

3. Օվսաննա՜ (3) Թագավորին (2),
Տե՜ր, Քո անունը հավիտյան է,
Համբավդ՝ ազգից մինչև ազգ,
Քո սերը քաղցր է մեղրից ավելի,
Խոսքդ՝ լույս իմ ճանապարհին:

4. Օվսաննա՜ (3) Թագավորին (2),
Ուրեմն երգենք բարձրաձայն,
Որ աշխարհը լսի մեր ձայն
Եվ իմանա, թե Նա է միայն
Թագավոր հավիտենության: